

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԱՏՎԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴՂԱՐՁ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Լատվիայի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր),
ընդունելով մի Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների առանց խտրականության հիմքերի պաշտպանության անհրաժեշտությունը մյուս Պայմանավորվող կողմի տարածքում,
ցանկանալով խրախուսել երկու կողմերի միջև տնտեսական համագործակցությունը մի Պայմանավորվող կողմի քաղաքացիների և ընկերությունների կողմից մյուս Պայմանավորվող կողմի տարածքում կատարված ներդրումների վերաբերյալ,
ընդունելով, որ այդ ներդրումներին տրամադրվող ռեժիմի վերաբերյալ
Համաձայնագիրը կնպաստի մասնավոր կապիտալի հոսքերին և Պայմանավորվող կողմերի տնտեսական զարգացմանը,
համաձայնելով, որ կայուն համակարգը ներդրումների համար կնպաստի տնտեսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության ավելացմանը և կենսամակարդակի բարելավմանը,
ընդունելով, որ տնտեսական և գործարար կապերի զարգացումը կարող է նպաստել միջազգայնորեն ճանաչված աշխատանքային իրավունքների պահպանմանը,
համաձայնելով, որ այս նպատակներին կարելի է հասնել առանց նվազեցնելու առողջության, անվտանգության և բնապահպանական՝ ընդհանուր կիրառման չափանիշները,
որոշելով կնքել ներդրումների խրախուսման և պաշտպանության մասին
Համաձայնագիր,

համաձայնեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1
Սահմանումներ

Սույն Համաձայնագրի նպատակների համար.
1. "Ներդրում" տերմինը նշանակում է՝ ցանկացած տեսակի գույք, որը ներդրվում է մի Պայմանավորվող կողմի ներդրողների կողմից մյուս Պայմանավորվող կողմի տարածքում՝ նրանցից յուրաքանչյուրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, և մասնավորապես, սակայն ոչ բացառապես ներառում է.
ա) շարժական և անշարժ գույքը և առնչվող գույքային իրավունքները, ինչպես, օրինակ, վարձակալությունը, գրավադրությունը, գրավի իրավունքը և գրավը,
բ) բաժնետոմսերը, բաժնեմասերը և պարտքային պարտավորությունները կամ ընկերություններում մասնակցության ցանկացած այլ ձև,
գ) դրամական կամ պայմանագրի շրջանակներում որեւէ տնտեսական արժեք ունեցող պարտավորության կատարման պահանջները,
դ) մտավոր սեփականության իրավունքները, ներառյալ հեղինակային իրավունքները, ապրանքանիշերը, արտոնագրերը, արդյունաբերական նախագծերը և տեխնիկական գործընթացները, նոու-հաուս, առետրային գաղտնիքները, առետրային անունները և բարի համբավը,
ե) օրենքով կամ պայմանագրով տրամադրված գործարար կոնցեսիաները, ներառյալ բնական պաշարների հետազոտման, մշակման, արդյունահանման կամ շահագործման կոնցեսիաները:
Գույքի ձեւի որեւէ փոփոխությունը, որով այն ներդրվել կամ վերաներդրվել է, չի ազդի նրա դիտարկմանը որպես ներդրման՝ պայմանով, որ այդ փոփոխությունը համապատասխանի այն Պայմանավորվող կողմի օրենքներին և այլ իրավական ակտերին,

որի տարածքում ներդրումները իրականացվել են:

2. "Ներդրող" տերմինը նշանակում է՝ ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը ներդրում է կատարում մյուս Պայմանավորվող կողմի տարածքում:

ա) Հայաստանի Հանրապետության համար.

1. "Ֆիզիկական անձ" նշանակում է՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող անձինք.

2. "իրավաբանական անձ" նշանակում է՝ իրավաբանական հաստատություններ, որոնք ստեղծվել կամ հիմնադրվել են՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների եւ այլ իրավական ակտերի:

բ) Լատվիայի Հանրապետության համար.

1. "Ֆիզիկական անձ" նշանակում է՝ Լատվիայի Հանրապետության քաղաքացիներ, ինչպես նաեւ Լատվիայում մշտապես բնակվող անձինք, որոնք Լատվիայի կամ որեւէ այլ պետության քաղաքացիներ չեն, սակայն իրավունք ունեն, Լատվիայի Հանրապետության օրենքներին եւ այլ իրավական ակտերին համապատասխան, ստանալու ոչ քաղաքացու անձնագիր.

2. "իրավաբանական անձ" նշանակում է՝ ընկերություններ, ընկերակցություններ եւ հաստատություններ, որոնք ստեղծվել կամ հիմնադրվել են համաձայն Լատվիայի Հանրապետության օրենքների եւ այլ իրավական ակտերի.

3. "Եկամուտ" տերմինը նշանակում է՝ ներդրման արդյունքում ստացված դրամական գումարներ եւ, մասնավորապես, շահույթ, տոկոսներ, կապիտալի աճ, դիվիդենտներ, ռոյալթիներ, լիցենզավորման վճարներ կամ այլ վճարումներ:

4. "Տարածք" տերմինը նշանակում է՝ Պայմանավորվող կողմերի հողային տարածք, ներքին ջրեր ու ծովային տարածք եւ դրանց օդային տարածություն, ինչպես նաեւ տարածքային ջրերից դուրս տարածվող մերձափնյա եւ ստորջրյա տարածքներ, որոնց նկատմամբ Պայմանավորվող կողմը իրականացնում է ինքնիշխան իրավունքներ կամ իրավասություն, համաձայն իր գործող ազգային օրենքների եւ միջազգային իրավունքի, նման տարածքների բնական ռեսուրսների հետազոտման եւ շահագործման նպատակով:

ՀՈԴՎԱԾ 2

Ներդրումների խրախուսումը եւ պաշտպանությունը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կխրախուսի եւ կստեղծի բարենպաստ պայմաններ իր տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների իրականացման համար եւ կընդունի այդպիսի ներդրումները՝ համաձայն իր օրենքների եւ այլ իրավական ակտերի:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումներին եւ դրանցից ստացված եկամուտներին կտրամադրի արդար ու հավասար ռեժիմ եւ լիարժեք ու մշտական պաշտպանություն ու անվտանգություն:

3. Պայմանավորվող կողմերից ոչ մեկը իր տարածքում ոչ խելամիտ, խտրական կամ անօրինական միջոցներով չի խոչընդոտի մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների ընդլայնումը, կառավարումը, պահպանությունը, օգտագործումը, տիրապետումն ու վաճառքը կամ այլ կերպ տնօրինումը:

ՀՈԴՎԱԾ 3

Ազգային եւ առավել բարենպաստ ազգի ռեժիմ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումներին կտրամադրի այնպիսի ռեժիմ, որը կլինի ոչ պակաս բարենպաստ, քան այն ռեժիմն է, որը նա տրամադրում է իր ներդրողների ներդրումներին՝ կապված ներդրումների ընդլայնման, կառավարման, պահպանման, օգտագործման, տիրապետման ու վաճառքի կամ այլ կերպ տնօրինման հետ:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմի

ներդրողներին եւ սրանց ներդրումներին ու ներդրումներից ստացված եկամուտներին կտրամադրի ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմն է, որը տրամադրում է իր սեփական կամ ցանկացած երրորդ պետության ներդրողներին եւ սրանց ներդրումներին ու ներդրումներից ստացված եկամուտներին՝ կապված ներդրումների ընդլայնման, կառավարման, պահպանման, օգտագործման, տիրապետման ու վաճառքի կամ այլ կերպ տնօրինման հետ:

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումներին կտրամադրի այնպիսի ռեժիմ, որը կլինի սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված ռեժիմներից ամենաբարենպաստը:

ՀՈԴՎԱԾ 4 Բացառություններ

Սույն Համաձայնագրի դրույթներից ոչ մեկը չպետք է մեկնաբանվի որպես մի Պայմանավորվող կողմի համար պարտավորություն՝ տարածել մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների եւ սրանց ներդրումների ու ներդրումներից ստացված եկամուտների նկատմամբ ցանկացած առկա կամ ապագա ռեժիմի, առավելության կամ արտոնության շահավետություն, որը արդյունք է.

ա) ցանկացած անդամության ազատ առևտրի գոտու, մաքսային միության, արժույթային միության, ընդհանուր շուկայի կամ ցանկացած միջազգային համաձայնագրի, որոնք արդյունք են այսպիսի միությունների եւ նմանատիպ հաստատությունների,

բ) ցանկացած միջազգային համաձայնագրի կամ պայմանավորվածության կամ ներպետական օրենսդրության, որոնք գլխավորապես կամ ամբողջապես վերաբերում են հարկմանը:

ՀՈԴՎԱԾ 5 Օտարում եւ փոխհատուցում

1. Մի Պայմանավորվող կողմը չպետք է ուղղակի կամ անուղղակի կերպով առգրավի կամ ազգայնացնի մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումները կամ դրանց հավասարազոր հետեւանքներ ունեցող այլ միջոցներ ձեռնարկի (այսուհետ՝ առգրավում)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է.

ա) հանրային կարիքների համար,

բ) առանց խտրականության,

գ) օրենքով նախատեսված կարգով, եւ

դ) արագ, համարժեք եւ արդյունավետ փոխհատուցմամբ՝ սույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերին համապատասխան: Հայաստանի Հանրապետությունում փոխհատուցումը կատարվում է նախնական կարգով:

2. Փոխհատուցումը պետք է.

ա) վճարվի առանց ուշացման: Ուշացման դեպքում փոխարժեքի փոփոխության հետ կապված կորուստը պետք է հոգա ընդունող երկիրը,

բ) համարժեք լինի օտարվող ներդրման իրական շուկայական արժեքին նախքան օտարումը: Իրական շուկայական արժեքը չպետք է արտացոլի արժեքի որեւէ փոփոխություն՝ պայմանավորված օտարման նախօրոք հանրորեն հայտնի դառնալու հանգամանքով,

գ) լինի ամբողջովին իրագործելի եւ ազատ փոխանցելի,

դ) ներառի վճարման արժույթի նկատմամբ շուկայական հիմունքներով հաստատված առևտրային տոկոսադրույքը օտարման օրվանից մինչեւ փաստացի վճարման օրը:

3. Պայմանավորվող կողմի ներդրողը, որը տուժել է մյուս Պայմանավորվող կողմի կողմից իր ներդրումների օտարման արդյունքում, պետք է իրավունք ունենա իր գործի, ներառյալ ներդրման գնահատման ու փոխհատուցման վճարումը, շուտափույթ քննության վերջին Պայմանավորվող կողմի դատական կամ այլ իրավասու եւ անկախ մարմնի կողմից՝ համաձայն սույն հոդվածի դրույթների:

ՀՈԴՎԱԾ 6
Վնասների փոխհատուցումը

1. Մի Պայմանավորվող կողմի ներդրողը, որի ներդրումը վնասներ է կրել մյուս Պայմանավորվող կողմի տարածքում պատերազմի կամ այլ զինված ընդհարումների, արտակարգ իրավիճակների, հեղափոխության, խռովության, քաղաքացիական անկարգությունների կամ նման այլ իրավիճակների հետեւանքով վերջինիս տարածքում, կապված վնասների փոխհատուցման, վերականգնման կամ այլ կարգավորման հետ, վերջին Պայմանավորվող կողմը կտրամադրի այնպիսի ռեժիմ, որը կլինի ոչ պակաս բարենպաստ, քան այն ռեժիմն է, որը վերջին Պայմանավորվող կողմը տրամադրում է իր կամ որեւէ երրորդ պետության ներդրողներին, եւ որն ավելի բարենպաստ է այդ ներդրողի համար:

2. Մի Պայմանավորվող կողմի ներդրողը, որը 1-ին կետում նշված ցանկացած իրավիճակի հետեւանքով վնաս է կրում, եւ որը հետեւանք է.

ա) մյուս Պայմանավորվող կողմի զինված ուժերի կամ իշխանությունների կողմից նրա ներդրումների կամ դրանց մի մասի բռնագրավման, կամ

բ) մյուս Պայմանավորվող կողմի զինված ուժերի կամ իշխանությունների կողմից նրա ներդրումների կամ դրանց մի մասի ոչնչացման, որը չի բխում իրավիճակի անհրաժեշտությունից,

վերջին Պայմանավորվող կողմը ցանկացած դեպքում պետք է համաձայնի վերականգնել կամ փոխհատուցել, որը բոլոր դեպքերում պետք է լինի արագ, համարժեք ու արդյունավետ, եւ դրանից բխող ցանկացած փոխհատուցում պետք է կատարվի 5-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 7
Փոխանցումներ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, համաձայն իր օրենքների եւ այլ իրավական ակտերի, մյուս Պայմանավորվող կողմի ներդրողներին կերաշխավորի նրանց ներդրումների եւ ներդրումների հետ կապված վճարումների փոխանցումները իր տարածք եւ իր տարածքից դուրս: Այսպիսի փոխանցումները մասնավորապես, սակայն ոչ բացառապես կներառեն.

ա) ներդրումների պահպանման կամ աճի համար անհրաժեշտ սկզբնական կապիտալը եւ լրացուցիչ դրամային գումարները,

բ) եկամուտը,

գ) ներդրումների ամբողջական կամ մասնակի վաճառքից կամ լուծարումից ստացված միջոցները,

դ) պայմանագրով նախատեսված վճարումները. ներառյալ փոխառության վճարումը,

ե) վճարման ենթակա փոխհատուցումը՝ սույն Համաձայնագրի 5-րդ եւ 6-րդ հոդվածների համաձայն,

զ) վեճերի արդյունքում ստացված վճարումները,

է) ներդրման առնչությամբ արտասահմանից ներգրավված եւ աշխատողների եկամուտներն ու այլ վարձատրությունները:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է նաեւ երաշխավորի, որ սույն հոդվածի 1-ին կետում նշված փոխանցումները կիրականացվեն ազատ փոխարկելի արժույթով եւ փոխանցման իրականացման օրվա՝ արտարժույթի փոխանակման շուկայական հիմնական փոխարժեքով, որը կիրառելի է ներդրումն ընդունող Պայմանավորվող կողմի տարածքում:

3. Արտարժույթի փոխանակման շուկայի բացակայության դեպքում օգտագործվող դրույքաչափը կլինի Հատուկ փոխառության իրավունքներում օգտագործվող արտարժույթի փոխանակման ամենավերջին դրույքաչափը:

4. Չնայած սույն հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերին՝ Պայմանավորվող կողմը կարող է կանխել փոխանցումը՝ հավասար, ոչ խտրական եւ արդարության սկզբունքով կիրառելով իր օրենքները՝ կապված.

- ա) սնանկության, անվճարունակության կամ վարկատուի իրավունքների պաշտպանության հետ,
- բ) արժեթղթերի թողարկման, առքուվաճառքի կամ արժեթղթերի, ֆյուչերսների, օպցիոնների գործարքների հետ,
- գ) քրեական կամ վարչական իրավախախտումների հետ,
- դ) փոխանցումների ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կամ գրանցումների իրականացման հետ, երբ անհրաժեշտություն է առաջանում օժանդակելու օրենքի կիրառմանը կամ ֆինանսական կարգավորող մարմիններին, կամ
- ե) վարչական կամ դատական գործերով հրահանգներին կամ որոշումներին համապատասխանությունը ապահովելու հետ:

ՀՈԴՎԱԾ 8 Սուբրոգացիա

1. Եթե մի Պայմանավորվող կողմը կամ նրա լիազորած մարմինը իր ներդրողներին վճարումներ է կատարում, համաձայն մյուս Պայմանավորվող կողմի տարածքում իրականացվող ներդրումների կապակցությամբ տրամադրված երաշխիքի, ապա վերջին Պայմանավորվող կողմը ճանաչում է.

ա) առաջին Պայմանավորվող կողմին կամ նրա լիազորած մարմնին այդ ներդրողի ցանկացած իրավունքի կամ պահանջի փոխանցումը, համաձայն այդ երկրի օրենքի կամ այդ երկրում գործող այլ իրավական կարգավորման, ինչպես նաև այն, որ.

բ) առաջին Պայմանավորվող կողմը կամ նրա լիազորած մարմինը սուբրոգացիայի իրավունքով ստանում է ներդրողի իրավունքները իրականացնելու եւ նրա պահանջները ներկայացնելու իրավունք եւ պետք է ստանձնի այդ ներդրման հետ կապված պարտավորությունները:

2. Սուբրոգացիայի արդյունքում ստացված իրավունքները կամ պահանջները չեն կարող գերազանցել ներդրողի սկզբնական իրավունքները եւ պահանջները:

ՀՈԴՎԱԾ 9 Պայմանավորվող կողմի եւ ներդրողի միջեւ վեճերը

1. Մի Պայմանավորվող կողմի ներդրողի եւ մյուս Պայմանավորվող կողմի միջեւ ցանկացած իրավական վեճ՝ կապված մյուս Պայմանավորվող կողմի տարածքում կատարված ներդրման հետ, պետք է հնարավորության սահմաններում կարգավորվի բարեկամաբար՝ վեճին մասնակից կողմերի բանակցությունների միջոցով:

2. Եթե վեճը չի լուծվել 3 (երեք) ամսվա ընթացքում, սկսած գրավոր կերպով այն ներկայացնելու օրվանից, ապա ներդրողի ընտրությամբ այն կարող է փոխանցվել.

ա) այն Պայմանավորվող կողմի իրավասու դատարաններին, որի տարածքում կատարվել է ներդրումը,

բ) Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի (ICSID) միջնորդ դատավարությանը, որը հիմնվել է Պետությունների եւ այլ Պետությունների քաղաքացիների միջեւ ներդրումային վեճերի կարգավորման կոնվենցիայի հիման վրա, որը ստորագրման համար բաց է 1965 թ. մարտի 18-ից՝ Վաշինգտոնում (այսուհետ՝ Կենտրոն), պայմանով, որ եւ՛ վեճին մասնակից Պայմանավորվող կողմը, եւ՛ ներդրողի Պայմանավորվող կողմը հանդիսանում են այդ կոնվենցիայի (ICSID) կողմեր, կամ

գ) վարույթների լրացուցիչ կանոնների շրջանակներում գործող Կենտրոնի միջնորդ դատավարությանը, եթե վեճին մասնակից Պայմանավորվող կողմը կամ ներդրողի Պայմանավորվող կողմը ICSID կոնվենցիայի կողմ է, կամ

դ) ցանկացած ad hoc միջնորդ դատարանի. որը պետք է ստեղծվի Միավորված ազգերի կազմակերպության միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (UNCITRAL) արբիտրաժային կանոնների համաձայն, եթե վեճին մասնակցող կողմերը այլ համաձայնության չեն եկել:

3. Ներդրողը, որը վեճը ներկայացրել է ազգային դատարանին, կարող է, այնուամենայնիվ, դիմել սույն հոդվածի 2-րդ կետի "բ", "գ", "դ" ենթակետերում

նշված միջնորդ դատարաններին, քանի դեռ ազգային դատարանը վճիռ չի կայացրել խնդրո առարկայի վերաբերյալ, ներդրողը կարող է հայտարարել, որ այլևս չի շարունակում գործը ազգային ընթացակարգերով եւ հետ է վերցնում այն:

4. Վեճի կողմ հանդիսացող Պայմանավորվող կողմերը պարտավորվում են արբիտրաժային գործընթացի կամ արբիտրաժային որոշման իրականացման ցանկացած փուլում չփաստարկել այն հանգամանքը, որ վեճի կողմ հանդիսացող ներդրողը ապահովագրության հիման վրա ստացել է վնասների լիովին կամ մասնակի փոխհատուցում:

5. Սույն հոդվածով ստեղծված Միջնորդ դատարանը իր որոշումները կայացնում է համաձայն այն Պայմանավորվող կողմի ազգային օրենքների եւ այլ իրավական ակտերի, որը հանդիսանում է վեճին մասնակից կողմ, ինչպես նաեւ՝ սույն Համաձայնագրի դրույթների եւ միջազգային իրավունքի կիրառելի կանոնների:

6. Միջնորդ դատարանի վճիռը վերջնական եւ պարտադիր է վեճին մասնակից երկու կողմերի համար: Երկու Պայմանավորվող կողմերն էլ պետք է պարտավորվեն կիրարկել այդ որոշումը:

ՀՈԴՎԱԾ 10

Պայմանավորվող կողմերի միջեւ վեճերի կարգավորումը

1. Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված՝ Պայմանավորվող կողմերի միջեւ ծագած վեճերը հնարավորության սահմաններում կկարգավորվեն բարեկամաբար, դիվանագիտական ուղիներով:

2. Եթե վեճը այդ ձեւով չի կարող լուծվել երեք (3) ամսվա ընթացքում, ապա ցանկացած Պայմանավորվող կողմի պահանջով այն կփոխանցվի Միջնորդ դատարանին՝ համաձայն սույն հոդվածի դրույթների:

3. Յուրաքանչյուր առանձին դեպքի համար Միջնորդ դատարանը կստեղծվի հետեւյալ ձեւով. Միջնորդ դատավարության վերաբերյալ պահանջագրի ստացման օրվանից երկու (2) ամսվա ընթացքում Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը նշանակում է Դատարանի մեկական անդամի: Այդ երկու անդամներն ընտրում են երրորդ պետության քաղաքացու, որը երկու Պայմանավորվող կողմերի հավանությունը ստանալուց հետո նշանակվում է Դատարանի Նախագահ (այսուհետ՝ Նախագահ): Նախագահը կնշանակվի երկու (2) ամսվա ընթացքում՝ մյուս երկու անդամների նշանակումից սկսած:

4. Եթե սույն հոդվածի 3-րդ կետում նշված ժամանակաընթացքում անհրաժեշտ նշանակումները չեն կատարվել, ապա նշանակումների կատարման համար կարող է հրավիրվել Միջազգային դատարանի Նախագահը: Եթե պարզվի, որ նա հանդիսանում է Պայմանավորվող կողմերից որեւէ մեկի քաղաքացի, կամ եթե խոչընդոտող այլ պատճառներ կան՝ կատարելու համար նշված գործառույթը, ապա հրավիրվում է Միջազգային դատարանի Փոխնախագահը՝ նշանակումներ կատարելու համար: Եթե պարզվի, որ Փոխնախագահը նույնպես Պայմանավորվող կողմերից որեւէ մեկի քաղաքացի է կամ չի կարող կատարել նշված գործառույթը, Միջազգային դատարանի ավագությամբ հաջորդ անդամը, որը չի հանդիսանում Պայմանավորվող կողմերից որեւէ մեկի քաղաքացի, հրավիրվում է՝ կատարելու նշանակումները:

5. Միջնորդ դատարանը որոշումները կկայացնի ձայների մեծամասնությամբ: Այդպիսի որոշումները պարտադիր կլինեն: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կկրի իր անդամի եւ միջնորդ դատավարությունում իր ներկայացուցչության հետ կապված ծախսերը. Նախագահի եւ մնացած այլ ծախսերը երկու Պայմանավորվող կողմերը կկրեն հավասար չափաբաժիններով: Միջնորդ դատարանը կարող է, այնուամենայնիվ, որոշել, որ ծախսերի մեծ մասը կրի Պայմանավորվող կողմերից մեկը, եւ որոշումը պարտադիր կլինի Պայմանավորվող կողմերի համար: Միջնորդ դատարանը կսահմանի իր սեփական ընթացակարգը:

ՀՈԴՎԱԾ 11

Այլ կանոնների եւ հատուկ պարտականությունների կիրառումը

1. Եթե որեւէ խնդիր կարգավորվում է միաժամանակ սույն Համաձայնագրով եւ այլ միջազգային համաձայնագրով, որի կողմ է հանդիսանում յուրաքանչյուր Պայմանավորվող կողմը, ապա Պայմանավորվող կողմերից ոչ մեկին կամ նրանց ցանկացած ներդրողին, որը ներդրումներ ունի մյուս Պայմանավորվող կողմի տարածքում, սույն Համաձայնագրում ոչինչ չի խոչընդոտի օգտվելու տվյալ դեպքի համար առավել բարենպաստ կանոնների առավելությունից:

2. Եթե մի Պայմանավորվող կողմի կողմից, համաձայն նրա օրենքների եւ այլ իրավական ակտերի կամ պայմանագրերի այլ հատուկ դրույթների, մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումներին տրամադրված ռեժիմը առավել բարենպաստ լինի, քան այն ռեժիմն է, որը տրամադրվում է սույն Համաձայնագրով, ապա նրանց կտրամադրվի այդ առավել բարենպաստ ռեժիմը:

ՀՈԴՎԱԾ 12

Սույն Համաձայնագրի կիրառումը

Սույն Համաձայնագիրը կկիրառվի մի Պայմանավորվող կողմի տարածքում, համաձայն նրա օրենքների եւ այլ իրավական ակտերի, մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի կողմից կատարված ներդրումների նկատմամբ, որոնք կատարվել են ինչպես մինչեւ սույն Համաձայնագրի ուժի մտնելը, այնպես էլ դրանից հետո, բայց չի վերաբերի որեւէ ներդրումային վեճի, որը ծագել է, կամ որեւէ հայցի, որը լուծում է ստացել մինչեւ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելը:

ՀՈԴՎԱԾ 13

Ընդհանուր բացառություններ

1. Սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես պարտավորեցում մի Պայմանավորվող կողմին՝ պատերազմի կամ զինված ընդհարման կամ միջազգային հարաբերություններում այլ արտակարգ դրության դեպքում չիրականացնել ցանկացած անհրաժեշտ գործողություն իր էական անվտանգության շահերի ապահովման համար:

2. Պայմանով, որ նման միջոցները չեն կիրառվում կամայական կամ անօրինական ձեւով կամ չեն հանդիսանում քողարկված սահմանափակումներ միջազգային առևտրի եւ ներդրումների նկատմամբ, սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես պարտավորեցում մի Պայմանավորվող կողմին՝ զերծ մնալ միջոցների ընդունումից կամ ձեռնարկումից, ներառյալ բնապահպանական միջոցառումները, որոնք.

- ա) անհրաժեշտ են հասարակական կարգը ապահովելու համար,
- բ) անհրաժեշտ են մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքի կամ առողջության պահպանման համար:

3. Սույն հոդվածի դրույթները չեն վերաբերի սույն Համաձայնագրի 5-րդ եւ 6-րդ հոդվածներին, ինչպես նաեւ 7-րդ հոդվածի 1.ե կետին:

ՀՈԴՎԱԾ 14

Թափանցիկությունը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է շուտափույթ հրապարակի կամ այլ կերպ հասարակությանը մատչելի դարձնի իր ընդհանուր կիրառման օրենքները, իրավական ակտերը, ընթացակարգերը, վարչական որոշումները եւ դատական վճիռները, ինչպես նաեւ միջազգային համաձայնագրերը, որոնք կարող են ազդել մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումներին առաջին Պայմանավորվող կողմի տարածքում:

2. Սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է պարտավորեցնի մի Պայմանավորվող կողմին՝ տրամադրել կամ թույլ տալ օգտվել ցանկացած գաղտնի կամ սեփական տեղեկատվությունից, ներառյալ կոնկրետ ներդրողներին կամ ներդրումներին վերաբերող տեղեկատվությունը, որի հրապարակումը կխոչընդոտի օրենքի կիրարկումը կամ կհակասի գաղտնիքի պաշտպանության իր օրենքներին կամ կվնասի կոնկրետ

Ներդրողների օրինական առևտրային շահերը:

ՀՈԴՎԱԾ 15
Խորհրդակցություններ

Պայմանավորվող կողմերը յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի պահանջով պետք է անցկացնեն խորհրդակցություններ սույն Համաձայնագրի իրականացման քննության և ցանկացած հարցի ուսումնասիրման նպատակով, որը կարող է բխել սույն Համաձայնագրից: Նման խորհրդակցությունները կանցկացվեն Պայմանավորվող կողմերի իրավասու իշխանությունների միջև՝ համապատասխան ուղիներով համաձայնեցված վայրում և ժամկետներում:

ՀՈԴՎԱԾ 16

Համաձայնագրի ուժի մեջ մտնելը, տեւողությունը և դադարեցումը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ գրավոր կժանուցի սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար իր օրենքներով պահանջվող ընթացակարգերի ավարտման մասին: Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում վերջին ծանուցումը ստանալու օրվանից հետո՝ 30-րդ օրը:

2. Սույն Համաձայնագիրը կնքվում է տասը (10) տարի ժամկետով և այնուհետև ամեն անգամ կերկարաձգվի նույն ժամանակահատվածով, եթե Պայմանավորվող կողմերից որեւէ մեկը Համաձայնագրի գործողության ժամկետը լրանալուց առնվազն տասներկու (12) ամիս առաջ գրավոր չտեղեկացնի մյուս Պայմանավորվող կողմին սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

3. Այն ներդրումների նկատմամբ, որոնք կատարվել են մինչև սույն Համաձայնագրի գործողության դադարեցման ժամկետը, սույն Համաձայնագրի 1-15-րդ հոդվածների դրույթները կգործեն դադարեցման ժամկետից հետո ևս տասը (10) տարվա ընթացքում:

Ի վկայություն վերը նշվածի՝ համապատասխան Կառավարությունների կողմից պատշաճ կերպով լիազորված ներքոհիշյալ ներկայացուցիչները ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Երեւան քաղաքում, 2005 թվականի հոկտեմբերի 7-ին, երկու օրինակով, հայերեն, լատիշերեն և անգլերեն. ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Մեկնաբանման շուրջ որեւէ տարաձայնություն առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2007 թվականի ապրիլի 21-ից:

AGREEMENT
BETWEEN THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE
GOVERNMENT OF THE REPUBLIC OF LATVIA FOR THE PROMOTION AND
RECIPROCAL PROTECTION OF INVESTMENTS

The Government of the Republic of Armenia and the Government of the Republic of Latvia (hereinafter referred to as the "Contracting Parties"),

Recognising the need to protect investments of the investors of one Contracting Party in the territory of the other Contracting Party on a non-discriminatory basis;

Desiring to promote greater economic cooperation between them, with respect to investments by nationals and companies of one Contracting Party in the territory of the other Contracting Party;

Recognising that agreement on the treatment to be accorded to such investments will stimulate the flow of private capital and the economic development of the Contracting Parties;

Agreeing that a stable framework for investments will contribute to maximising the effective utilisation of economic resources and improve living standards;

Recognising that the development of economic and business ties can promote respect for internationally recognised labour rights,

Agreeing that these objectives can be achieved without relaxing health, safety and environmental measures of general application; and

Having resolved to conclude an Agreement concerning the promotion and protection of investments:

HAVE AGREED AS FOLLOWS:

ARTICLE 1
DEFINITIONS

For the purpose of this Agreement,

1. The term "investment" means every kind of asset invested by investors of one Contracting Party in accordance with the laws and regulations of the other Contracting Party in the territory of the latter, and in particular, though not exclusively, includes:

(a) movable and immovable property and related property rights, such as leases, mortgages, liens and pledges;

(b) shares, stocks, debentures and any other form of participation in a company;

(c) claims to money or to any performance under contract having an economic value;

(d) intellectual property rights, including copyrights, trademarks, patents, industrial designs and technical processes, know-how, trade secrets, trade names and goodwill;

(e) business concessions conferred by law or under contract, including concessions to search for, cultivate, extract or exploit natural resources.

Any alteration of the form in which assets are invested or reinvested shall not affect their character as an investment provided that such alteration is in accordance with the laws and regulations of the Contracting Party in whose territory the investment was made.

2. The term "investor" shall mean any natural or legal person who invests in the territory of the other Contracting Party.

(a) In respect of the Republic of Armenia:

(i) "natural person" means persons having the nationality of the Republic of Armenia;

(ii) "legal person" means legal entities which are incorporated or constituted in accordance with the laws and regulations of the Republic of Armenia.

(b) In respect of the Republic of Latvia:

(i) "natural person" means citizens of the Republic of Latvia as well as persons permanently residing in Latvia who are not citizens of Latvia or any other state but who are entitled, under the laws and regulations of the Republic of Latvia, to receive a non-citizen's passport;

(ii) "legal person" means companies, associations and establishments, which are incorporated or constituted in accordance with the laws and regulations of the Republic of Latvia.

3. The term "returns" means the amounts yielded by an investment and, in particular, profits, interests, capital gains, dividends, royalties, licence fees and other fees.

4. The term "territory" means the land territory, internal waters and territorial sea of the Contracting Party and the airspace above them, as well as the maritime zones beyond the territorial sea, including the seabed and subsoil, over which that Contracting Party exercises sovereign rights or jurisdiction in accordance with its national laws in force and international law, for the purpose of exploration and exploitation of the natural resources of such areas.

ARTICLE 2 PROMOTION AND PROTECTION OF INVESTMENTS

1. Each Contracting Party shall encourage and create favourable conditions for investors of the other Contracting Party to make investments in its territory and shall admit such investments in accordance with its laws and regulations.

2. Each Contracting Party shall in its territory accord to investments and returns of investments of investors of the other Contracting Party fair and equitable treatment and full and constant protection and security.

3. Neither Contracting Party shall in its territory impair by unreasonable, discriminatory or arbitrary measures the expansion, management, maintenance, use, enjoyment and sale or other disposal of investments of investors of the other Contracting Party.

ARTICLE 3 NATIONAL AND MOST-FAVOURABLE-NATION TREATMENT

1. Each Contracting Party shall accord to investments of investors of the other Contracting Party, treatment no less favourable than that it accords to investments of its own investors with respect to the expansion, management, maintenance, use, enjoyment and sale or other disposal of investments.

2. Each Contracting Party shall accord to investors of the other Contracting Party and to their investments and returns of investments, a treatment no less favourable than the treatment it accords to investors of any third State and to their investments and returns of investments with respect to expansion, management, maintenance, use, enjoyment and sale or other disposal of investments.

3. Each Contracting Party shall accord to investments of investors of the other Contracting Party treatment, which is the most favorable of those stipulated in paragraph 1 and paragraph 2 of this Article.

ARTICLE 4 EXEMPTIONS

No provision of this Agreement shall be construed as to oblige a Contracting Party to extend to the investors of the other Contracting Party and to their investments and returns of investments the present or future benefit of any treatment, preference or privilege resulting from:

(a) any membership in a free trade area, customs union, monetary union, common market and any international agreement resulting in such unions or similar institutions;

(b) any international agreement or arrangement, or domestic legislation relating wholly or mainly to taxation.

ARTICLE 5 EXPROPRIATION AND COMPENSATION

1. A Contracting Party shall not expropriate or nationalise directly or indirectly an investment of an investor of the other Contracting Party or take any measures having equivalent effect (hereinafter referred to as expropriation) except:

(a) for a public purpose;

(b) in a non-discriminatory manner;

. in accordance with due process of law; and

(d) on payment of prompt, adequate and effective compensation in accordance with paragraphs 2 and 3 of this Article. In the Republic of Armenia compensation is paid in advance.

2. Compensation shall:

(a) be paid without delay. In case of delay any exchange rate loss

arising from this delay shall be borne by the host country;

(b) be equivalent to the fair market value of the expropriated investment immediately before the expropriation occurred. The fair market value shall not reflect any change in value occurring because the expropriation had become publicly known earlier;

. be fully realizable and freely transferable;

(d) include interest at a commercial rate established on a market basis for the currency of payment from the date of expropriation until the date of actual payment.

3. An investor of a Contracting Party which claims to be affected by expropriation by the other Contracting Party shall have the right to prompt review of its case, including the valuation of its investment and the payment of compensation in accordance with the provisions of this Article, by a judicial authority or another competent and independent authority of the latter Contracting Party.

ARTICLE 6 COMPENSATION FOR LOSSES

1. An investor of a Contracting Party who has suffered a loss relating to its investment in the territory of the other Contracting Party due to war or to other armed conflict, state of national emergency, revolution, insurrection, civil disturbance or any other similar event in the territory of the latter Contracting Party, shall be accorded by the latter Contracting Party treatment, as regards restitution, indemnification, compensation or any other settlement, no less favourable than that which it accords to its own investors or to investors of any third state, whichever is more favourable to the investor.

2. An investor of a Contracting Party who in any of the events referred to in paragraph 1 suffers loss resulting from:

(a) requisitioning of its investment or part thereof by the forces or authorities of the other Contracting Party, or

(b) destruction of its investment or part thereof by the forces or authorities of the other Contracting Party, which was not required by the necessity of the situation,

shall in any case be accorded by the latter Contracting Party restitution or compensation which in either case shall be prompt, adequate and effective and, with respect to compensation, shall be in accordance with paragraphs 2 and 3 of Article 5.

ARTICLE 7 TRANSFERS

1. Each Contracting Party shall, subject to its laws and regulations, ensure to investors of the other Contracting Party the transfer, into and out of its territory, of their investments and transfer payments related to

investments. Such payments shall include in particular, though not exclusively:

(a) the initial capital and additional amounts to maintain or increase an investment;

(b) returns;

. proceeds obtained from the total or partial sale or liquidation of investments;

(d) payments made under a contract, including a loan payment;

(e) compensation payable pursuant to Articles 5 and 6 of this Agreement;

(f) payments arising out of a dispute;

(g) earnings and other remuneration of personnel engaged from abroad and working in connection with an investment.

2. Each Contracting Party shall further ensure that the transfers referred to in paragraph 1 of this Article shall be made in a freely convertible currency and at the prevailing market rate of exchange applicable within the Contracting Party accepting the investments and on the date of transfer.

3. In the absence of a market for foreign exchange, the rate to be used shall be the most recent exchange rate for the conversions of currencies into Special Drawing Rights.

4. Notwithstanding paragraphs 1, 2 and 3 of this Article, a Contracting Party may prevent a transfer through the equitable, nondiscriminatory, and good faith application of its laws relating to:

(a) bankruptcy, insolvency, or the protection of the rights of creditors;

(b) issuing, trading, or dealing in securities, futures, options, or derivatives;

. criminal or penal offenses;

(d) financial reporting or record keeping of transfers when necessary to assist law enforcement or financial regulatory authorities; or

(e) ensuring compliance with orders or judgements in judicial or administrative proceedings.

ARTICLE 8 SUBROGATION

1. If a Contracting Party or its designated agency makes payment to its own investors under a guarantee it has accorded in respect of an investment

in the territory of the other Contracting Party, the latter Contracting Party shall recognize:

(a) the assignment, whether under the law or pursuant to a legal transaction in that country, of any right or claim by the investor to the former Contracting Party or its designated agency, as well as,

(b) that the former Contracting Party or its designated agency is entitled by virtue of subrogation to exercise the rights and enforce the claims of that investor and shall assume the obligations related to the investment.

2. The subrogated rights or claims shall not exceed the original rights or claims of the investor.

ARTICLE 9 DISPUTES BETWEEN AN INVESTOR AND A CONTRACTING PARTY

1. Any legal dispute between an investor of one Contracting Party and the other Contracting Party in connection with an investment in the territory of the other Contracting Party shall, as far as possible, be settled amicably through negotiations between the parties to the dispute.

2. If the dispute has not been settled within three (3) months from the date on which it was raised in writing, the dispute may, at the choice of the investor, be submitted:

(a) to the competent courts of the Contracting Party in whose territory the investment is made; or

(b) to arbitration under the International Centre for Settlement of Investment Disputes (ICSID), established pursuant to the Convention on the Settlement of Investment Disputes between States and Nationals of other States, opened for signature at Washington on 18 March 1965 (hereinafter referred to as the "Centre"), provided that both the disputing Contracting Party and the Contracting Party of the investor are parties to the ICSID Convention; or

. to arbitration under the Additional Facility of the Centre, provided that either the disputing Contracting Party or the Contracting Party of the investor is a party the ICSID Convention; or

(d) to any ad hoc arbitration tribunal which unless otherwise agreed on by the parties to the dispute, is to be established under the Arbitration Rules of the United Nations Commission on International Trade Law (UNCITRAL).

3. An investor who has submitted the dispute to a national court may nevertheless have recourse to one of the arbitral tribunals mentioned in paragraphs 2 (b) to (d) of this Article if, before a judgment has been delivered on the subject matter by a national court, the investor declares not to pursue the case any longer through national proceedings and withdraws the case.

4. Neither of the Contracting Parties, which is a party to a dispute, can raise an objection, at any phase of the arbitration procedure or of the execution of an arbitral award, on account of the fact that the investor, which is the other party to the dispute, has received an indemnification covering a part or the whole of its losses by virtue of an insurance.

5. The arbitral tribunal established under this Article shall reach its decision on the basis of national laws and regulations of the Contracting Party, which is a party to the dispute, provisions of this Agreement, as well as applicable rules of international law.

6. The arbitration award shall be final and binding upon both parties to the dispute. Both Contracting Parties shall commit themselves to the enforcement of the award.

ARTICLE 10 SETTLEMENT OF DISPUTES BETWEEN THE CONTRACTING PARTIES

1. Disputes between the Contracting Parties concerning the interpretation or application of this Agreement shall, as far as possible, be settled amicably through diplomatic channels.

2. If the dispute cannot be thus settled within three (3) months, it shall upon the request of either Contracting Party, be submitted to an Arbitral Tribunal in accordance with the provisions of this Article.

3. The Arbitral Tribunal shall be constituted for each individual case in the following way. Within two (2) months of the receipt of the request for arbitration, each Contracting Party shall appoint one member of the Tribunal. These two members shall then select a national of a third State who on approval of the two Contracting Parties shall be appointed Chairman of the Tribunal (hereinafter referred to as the "Chairman"). The Chairman shall be appointed within two (2) months from the date of appointment of the other two members.

4. If within the periods specified in paragraph 3 of this Article the necessary appointments have not been made, a request may be made to the President of the International Court of Justice to make the appointments. If he happens to be a national of either Contracting Party, or if he is otherwise prevented from discharging the said function, the Vice-President shall be invited to make the appointments. If the Vice-President also happens to be a national of either Contracting Party or is prevented from discharging the said function, the member of the International Court of Justice next in seniority who is not a national of either Contracting Party shall be invited to make the appointments.

5. The Arbitral Tribunal shall reach its decision by a majority of votes. Such decision shall be binding. Each Contracting Party shall bear the cost of its own arbitrator and its representation in the arbitral proceedings; the cost of the Chairman and the remaining costs shall be borne in equal parts by the both Contracting Parties. The Arbitral Tribunal may, however, decide that a higher proportion of the costs shall be borne by one of the two Contracting Parties and this award shall be binding on both Contracting Parties. The Arbitral Tribunal shall determine its own

procedure.

ARTICLE 11 APPLICATION OF OTHER RULES AND SPECIAL COMMITMENTS

1. Where a matter is governed simultaneously both by this Agreement and by another international agreement to which both Contracting Parties are parties, nothing in this Agreement shall prevent either Contracting Party or any of its investors who own investments in the territory of the other Contracting Party from taking advantage of whichever rules are more favourable to his case.

2. If the treatment to be accorded by one Contracting Party to investments of investors of the other Contracting Party in accordance with its laws and regulations or other specific provisions of contract is more favourable than that accorded by this Agreement, the more favourable shall be accorded.

ARTICLE 12 APPLICABILITY OF THIS AGREEMENT

This Agreement shall apply to investments made in the territory of one of the Contracting Parties in accordance with its laws and regulations by investors of the other Contracting Party prior to as well as after the entry into force of this Agreement, but shall not apply to any dispute concerning an investment which arose, or any claim which was settled before its entry into force

ARTICLE 13 GENERAL EXCEPTIONS

1. Nothing in this Agreement shall be construed as preventing a Contracting Party from taking any action necessary for the protection of its essential security interests in time of war or armed conflict, or other emergency in international relations.

2. Provided that such measures are not applied in an arbitrary or unjustifiable manner, or do not constitute a disguised restriction on international trade or investment, nothing in this Agreement shall be construed to prevent a Contracting Party from adopting or maintaining measures, including environmental measures:

- (a) necessary for the maintenance of public order;
- (b) necessary to protect human, animal or plant life or health.

3. The provisions of this Article shall not apply to Article 5, Article 6 or paragraph 1(e) of Article 7 of this Agreement.

ARTICLE 14 TRANSPARENCY

1. Each Contracting Party shall promptly publish, or otherwise make publicly available, its laws, regulations, procedures and administrative rulings and judicial decisions of general application as well as

international agreements which may affect the investments of investors of the other Contracting Party in the territory of the former Contracting Party.

2. Nothing in this Agreement shall require a Contracting Party to furnish or allow access to any confidential or proprietary information, including information concerning particular investors or investments, the disclosure of which would impede law enforcement or be contrary to its laws protecting confidentiality or prejudice legitimate commercial interests of particular investors.

ARTICLE 15 CONSULTATIONS

The Contracting Parties shall, at the request of either Contracting Party, hold consultations for the purpose of reviewing the implementation of this Agreement and studying any issue that may arise from this Agreement. Such consultations shall be held between the competent authorities of the Contracting Parties in a place and at a time agreed on through appropriate channels.

ARTICLE 16 ENTRY INTO FORCE, DURATION AND TERMINATION

1. Each Contracting Party shall notify the other in writing of the completion of the procedures required by its law for bringing this Agreement into force. The Agreement shall enter into force on the thirtieth day following the date of receipt of the last notification.

2. This Agreement shall remain in force for a period of ten (10) years and shall thereafter remain in force on the same terms until either Contracting Party notifies the other in writing of its intention to terminate the Agreement in twelve (12) months.

3. In respect of investments made prior to the termination of this Agreement, the provisions of Articles 1 to 15 of this Agreement shall continue to be effective for a period of ten (10) years from the date of termination.

IN WITNESS WHEREOF the undersigned, duly authorized thereto by respective Governments, have signed this Agreement.

Done in duplicate at Yerevan, this 7 day of October 2005, in the Armenian, Latvian and English languages, all texts being equally authentic.

In case of any divergence of interpretation, the English text shall prevail.

The Agreement has entered into force on 21 April 2007.

